

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՇՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ՎԱՐԺԱՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱծ՝ ԱՌԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՆԿԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐԴՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱծ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՇՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

28 սեպտեմբերի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Շ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի
(գեկուցող), Վ. Շովիաննիսյանի, Շ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի
2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2005 թվականի մայիսի 16-ին
Վարշավյում սպորագրված՝ Ահարեկչության կանխարգելման մասին Եվրոպայի
խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարավորությունների՝ Հայաստանի Հանրա-
պետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբեր-
յալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը
սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության
Նախագահի ներկայացուցչի՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտան-
գության ծառայության տնօրենի առաջին տեղակալ Շ. Հարությունյանի գրավոր բացա-
դրությունները, հետազոտելով կոնվենցիան և գործում առկա մյուս փասդաթղթերը,
Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Կոնվենցիան սպորագրվել է 2005թ. մայիսի 16-ին Վարշավյում՝ եղնելով
մասնակից պետությունների կողմից ահարեկչության կանխարգելմանն ուղղված

շանքերի համախմբման անհրաժեշտությունից: Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան սդորագրել է 2005թ. նոյեմբերի 17-ին:

Կոնվենցիայի նպատակն է նպաստել ահարեւկչության կանխարգելմանն ուղղված Կողմերի ջանքերին՝ ահարեւկչության եւ մարդու իրավունքների, մասնավորապես կյանքի իրավունքի վրա դրա բացասական հետեւանքները կանխելու նպատակով, թե՛ ազգային, թե՛ միջազգային համագործակցության մակարդակում ձեռնարկվող քայլերի միջոցով՝ հաշվի առնելով Կողմերի միջև առկա բազմակողմ կամ երկկողմ պայմանագրերը եւ համաձայնագրերը:

2. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն սպանձնում է մի շարք պարագավորություններ, մասնավորապես.

- ձեռնարկել անհրաժեշտ քայլեր ահարեւկչության հանցագործությունները եւ դրանց բացասական հետեւանքները կանխելու նպատակով ազգային մարմինների միջև համագործակցությունը զարգացնելու համար դեղեկարգվության փոխանակման, անձանց եւ շինությունների ֆիզիկական պաշտպանության կարգարելագործման, քաղաքացիական արգակարգ իրավիճակների համար վերապարհասպան եւ համակարգման ծրագրերի կարգարելագործման ոլորտներում,

- նպաստել հանդուրժողականությանը՝ իրախուսելով միջկրոնական եւ միջմշակութային երկխոսությունը, ներգրավելով, համապարակախան դեպքերում, հասարակական կազմակերպությունները եւ քաղաքացիական հասարակության այլ դաշտերը՝ նպատակ ունենալով կանխել լարվածությունը, որը կարող է նպաստել ահարեւկական հանցագործությունների իրականացմանը,

- ընդունել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել կոնվենցիայում նշված ապօրինի եւ միտումնավոր ահարեւկական հանցագործություն կարգարելուն ուղղված իրապարակային սադրանքը, ահարեւկական նպատակներով ապօրինի եւ միտումնավոր հավաքագրումը, ուսուցանումը **«**օրենսդրությամբ քրեական հանցագործություն ճանաչելու համար,

- ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, **«**իրավական սկզբունքներին համապարակախան, կոնվենցիայում հիշարկակած հանցագործություններին մասնակցելու համար իրավաբանական անձանց քրեական, քաղաքացիական կամ վարչական պարագախանական սահմանելու համար, ինչպես նաև երաշխավորել, որ նման պարագախանական սահմանելու համար, ինչպես նաև կարգարած ֆիզիկական անձանց քրեական պարագախանական վրա,

- երաշխավորել, որ կոնվենցիայի համաձայն քրեական պարագախանական պարագախանական սահմանումը, իրականացումը եւ կիրառումն իրականացվեն՝ հարգելով մարդու իրա-

վունքներին առնչվող պարփակորությունները, մասնավորապես՝ խոսքի ազարության, միավորումներ կազմելու ազարության եւ դավանանքի ազարության իրավունքը՝ սահմանված Մարդու իրավունքների եւ հիմնարար ազարությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, ինչպես նաև միջազգային իրավունքին համապարասիստներում:

- ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել կոնվենցիայում հիշաբակված հանցագործությունների նկարմամբ ՀՀ իրավագորությունը հասրաբելու համար՝ այն դեպքերում, երբ հավանական հանցագործը գրնվում է ՀՀ դարաձքում, եւ ՀՀ-ն չի հանձնում նրան այն մասնակից պետությանը, որի իրավագորությունը հիմնված է ՀՀ օրենքում հավասարապես առկա իրավագորության կանոնի վրա,

- սպանալով գրեղեկաբարվություն այն մասին, որ անձը, որը կարարել է կոնվենցիայում հիշաբակված հանցագործություն կամ կասկածվում է այն կարարելու մեջ, կարող է գրնվել ՀՀ դարաձքում՝ ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ՀՀ օրենսդրությանը համապարասիստների այդ գրեղեկաբարվության մեջ պարունակվող փասբերը հետաքրնելու համար,

- մասնակից մյուս պետություններին ցուցաբերել փոխադարձ առավելագույն աջակցություն կոնվենցիայում նշված հանցագործությունների քրեական հետաքրնելությունների կամ քրեական կամ հանձնման ընթացակարգերի առումով եւ այլն:

3. Կոնվենցիայով ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 3 եւ 9 հոդվածներին եւ բխում են միջազգային փոխահավելք համագործակցության հասրաբման սահմանադրական սկզբունքներից:

Ենելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դադարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը **Ո Ռ Ո Շ Ե Յ.**

1. 2005 թվականի մայիսի 16-ին Վարշավայում սպորագրված՝ Ահաքեկության կանխարգելման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարփակորությունները համապարասիստներում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՎԱԾՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 սեպտեմբերի 2007 թվականի
ՍԴՈ-715